ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 23-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, քահանայական կոչում և ձեռնադրություն ստացան Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարանի յոթ սարկավագներ:

Փետրվարի 22-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարի Իջման ս. սեղանի առջև կատարվեց բարեշնորհ Գրիգոր սրկ. Մնացականյանի, Հրանտ սրկ. Բարսեղյանի, Արմեն սրկ. Մելիքյանի, Խորեն սրկ. Մարուքյանի, Լևոն սրկ. Իսայանի, Լուսեղեն սրկ. Համբարյանի և Հրանտ սրկ. Հովհաննիսյանի «Կոչումն քահանայութեան յերեկոյէ» կարգը՝ ըստ Հայաստանյայց Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի:

Սրբազան արարողության խարտավիլակ հոգեշնորհ Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը վկայեց նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության և արժանիքների մասին: Ապա նորընծաներն ուխտեցին «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացըն և կալ ըստ կանոնաց նոցա»:

«Կոչումն քահանայութեան» արարողության ավարտին, նորընծաները հանդիսավորությամբ արտասանեցին Ս. Գրիգոր Տաթևացու «Հաւատոյ խոստովանութիւն»-ը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Փետրվարի 23-ին, կիրակի օրը, Մայրավանքը լեցուն էր հավատացյալների խուռներամ բազմությամբ: Մայր տաճարի Ավագ ս. խորանի վրա ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած և աստուածասէր ես

Աստուած գոլով» աղոթքը: Ապա խարտավիլակ հոգեշնորհ հայր սուրբը բարեշնորհ սարկավագներին ծնրադիր առաջնորդեց Ավագ ս. սեղան: Նորընծաները «Աստուածային և երկնաւոր շնորհ» հոգեթով շարականի երգեցողության ներքո, ձեռամբարձ, դարձան դեպի հավատացյալների բազմությունը՝ ի նշան աշխարհից հրաժարվելու: Այնուհետև պատարագիչ սրբազան հայրը, ձեռքը դնելով բարեշնորհ սարկավագների վրա, արտասանեց «Ես ձեռս դնեմ ի վերայ սոցա և դուք ամենեքեան աղոթս արարէք» ձեռնադրության խորհրդավոր աղոթքը:

Ձեռնադրող սրբազան հայրը նորընծաներին շնորհեց քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ կրելու իրավունք:

Ապա ընթերցվեցին մեր սրբազան հայրերի աղոթքներն ու երգվեցին սրտառուչ շարականներ: Ահավասիկ հոգևոր վերացման խորհրդավոր պահն է՝ օծման սրբազան արարողությունը: Ձեռնադրող սրբազանը սրբալույս մեռոնով օծում է նորընծաների ճակատը և ձեռքերը՝ վերանվանելով Գրիգոր սարկավագին՝ Տ. Մանուկ քահանա, Հրանտ սարկավագին՝ Տ. Եղիշե քահանա, Արմեն սարկավագին՝ Տ. Ստեփանոս քահանա, Խորեն սարկավագին՝ Տ. Խորեն քահանա, Լևոն սարկավագին՝ Տ. Հարություն քահանա, Լուսեղեն սարկավագին՝ Տ. Թադեոս քահանա, Հրանտ սարկավագին՝ Տ. Հովհաննես քահանա: Ապա նորընծաները, դառնալով ժողովրդին, տալիս են իրենց անդրանիկ օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Հանդիսավոր ձեռնադրության ավարտին պատարագիչ սրբազան հայրը նորընծաներին օրհնության և շնորհավորանքի խոսքեր ասաց ու տվեց իր հայրական պատգամը.

«Այսօրվա խորհրդավոր օրն իր մեջ բովանդակում է յոթ նորաօծ քահանաներ, որոնք հոգևոր ճեմարանի քահանայից լսարանի դասընթացն ավարտելուց հետո, երեկ երեկոյան կոչման արարողությամբ, ծունր դրին Իջման ս. սեղանի առջև՝ նվիրվելու համար մեր ժողովրդի և Եկեղեցու ծառայությանը: Այս յոթ թեկնածուներից ամեն մեկը եկել է Հայաստանի և ներքին Սփյուռքի տարբեր վայրերից: Նրանցից ոմանք Ռուսաստան պիտի գնան ծառայելու, ուրիշներ Արցախ պիտի գնան, այնտեղ իրենց ծառայությունը մատուցելու Եկեղեցուն և Եկեղեցու միջոցով՝ ժողովրդին:

Ահավասիկ հոգևոր ծառայությունը, որ ամբողջ կյանքով նվիրվում է ժողովրդին, իր գիտակցական, իմացական ողջ աշխարհը և իր հավաքած գիտելիքները ծառայության է դնում ժողովրդի համար: Այս է իսկական նահատակությունը, այս է իսկական վկայությունը, այս է իսկական զոհողությունը, որ մարդիկ, հակառակ իրենց երիտասարդ տարիքին, իրենց կյանքը նվիրում են Աստծուն»:

Այնուհետև սրբազան հայրն անդրադարձավ հոգևոր սպասավորի ներքին կոչման գիտակցության կարևոր խորհրդին, երբ անհատը, անդրադառնալով իր ներքնաշխարհին, ունկնդրում է աստվածային կոչման ձայնին և դառնում նրա սպասավորը:

«Թող Ս. Հոգին նրանց իմացական աշխարհը հերկի և բեռնավորի, նրանց առաքելական շնորհք տա՝ քարոզելու, ծառայելու, նվիրվելու, մխիթարելու: Երբեք նյութի ետևից մի ընկեք, նյութը կապականի ձեզ, այլ հոգևորի ետևից վազեք, ինչ որ ավելին ստանում եք, փորձեցեք աղքատին և խեղճին տալ՝ նրան բարձրացնելու և օգնելու համար: Այդ ձևով, այդ զոհողությամբ ու նվիրումով միայն դուք Աստուծո առջև մեծ պատիվ կստանաք»:

Սրբազան հոր ոգեշունչ քարոզը և ձեռնադրության հանդիսավոր արարողությունն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով:

* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա քահանա հայրերին՝ մաղթելով հավատարիմ մնալ իրենց կոչման ուխտին և լինել անձնդիր մշակները հայ հոգևոր անդաստանի: